«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

«Հեռազոտական աշխատանք կատարելու սկզբունքները»
բաժին

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *ճամփորդությունների, ճամբարների կազմակերպումը*

Կատարող՝ Հռիփսիմե Առաքելյան

Դասավանդած առարկան՝ «Իմացումի հրճվանք» / դասվարություն/

Խորհրդատու՝ Գևորգ Հակոբյան

2022

Բովանդակություն

- Ներածություն
- Ճամփորդությունների նախապատրաստությունը, ճամփորդի պայուսկը
- Ճամփորդության նախագծումն ու պլանավորումը
- Կրթական փոխանակման ծրագրերը ճամփորդությունների, ուսումնական ճամբարների միջոցով
- Ուսումնական ճամբարների նախագծումն ու կազմակերպումը
- Վերջաբան
- Գրականության ցանկ

Ներածություն

Ճամփորդությամբ ուսուցումն ինձ համար ամենագտնված ու հետաքրքիր մանկավարժական մեթոդներից է, որտեղ ազատ, անկաշկանդ, կենդանի միջավայրում հնարավոր է դառնում այնպիսի մանկավարժական խնդիրներ լուծել, որոնք դաս-դասարանային համակարգում մի շարք դժվարություններ են առաջացնում: Ուսուցումն արդյունավետ է, եթե կարողանում ես կյանքի համար, սեփական կենսափորձով ձևավորված, յուրացված կարողունակություններ և հմտություններ փոխանցել սովորողին:Հակառակ դեպքում վաղուց ծեծված,իրեն չարդարացրած և 21-րդ դարի ապագա քաղաքացուն,մարդուն ոչինչ չտվող, անհետաքրքիր զուբիտի դպրոցի մեթոդներն ես ստիպված լինում կիրառել, որոնք եթե սովորողին օգուտ չեն տալիս,իր կենսափորձում չի կիրառում,պարզապես սովորելու համար սովորում, հետո մոռանում է, ու՞մ են պետք:

Ինքս տեսակով ճամփորդ եմ, սիրում եմ նպատակներ դնել և իրագործել, դվարություններ հաղթահարել և իմ սովորողներին էլ առաջին դասարանից սկսած փոխանցում են այն հմտությունները, որոնք կարծում եմ շատ կարևոր են վաղա բազմակողմանի զարգացած, անվախ,ինքնուորույն մտածող և գործող քաղաքացի ձևավորելու համար:

Քանի որ հեղինակային կրթական ծրագրեր մշակող և իրականացնող կրթահամալիրում եմ աշխատում, իմ ուսումնական նախագծերն այնպես եմ կազմում, որ ամսվա ընթացքում յուրաքանչյուր նախագծով մի քանի անգամ ճամփորդելու հնարավորություն ունենան սովորողները: Ճամփորդելով սովորեն, հետազոտեն, ուսումնասիրեն, հետո իրենց տեսածի,լսածի, ապրածի, սովորածի մասին անպայման պատմեն տեսանյութերի, ռադիոնյութերի կամ պարզապես բլոգում ազատ շարադրանքի տեսքով:

Թումանյանական հայտնի հեքիաթի հերոսների նման, ես ու սովորողներս ճամփա ենք ընկնում տեսնելու, թե էն սար, ձորի, քարի, ծառի ետևը ի՞նչ կա չկա:

Ճամփորդությունների նախապատրաստությունը, ճամփորդի պայուսակը

Մինչև ճամփորդության մեկնելը սովորողների հետ աշխատանք է տարվում:Առաջին հերթին քննարկվում, յուրացվում է, թե ինչպիսի՞նն է ճամփորդը՝ ի՞նչ է հագնում,ի՞նչ պայուսակ է կրում, ի՞նչ պետք է ունենա ճամփորդն իր պայուսակում: Մշակվում են ճամփորդական կանոններ, որոնց ճամփորդը խստագույնս պետք է հետևի:

Ուսումնական ռադիոնյութ՝ Ի՞նչ վերցնել, եթե ճամփորդության ես գնում

Ճամփորդի հագուստը ջրակայուն, չկաշկանդող պետք է լինի: Սովորողների հետ քննարկում ենք, թե ի՞նչ կարելի է հագնել ճամփորդության գնալիս, զուգահեռ հագուստին վերաբերող նոր բառապաշար ենք ձեռք բերում, գրում, մուտքագրում են անծանոթ, նոր բառերը, փորձում են կիրառել իրենց խոսքում:Քանի որ «Իմացումի հրճվանք» ծրագրում նախագծային ուսուցում է իրականացվում, նույն նախագիծը զուգահեռ իրականացնում են նաև օտար լեզուների ուսուցիչները:Վերջինիս շնորհիվ օտարալեզու նոր բառեր, արտահայտություններ են սովորում, յուրացնում սովորողները:

Ուսումնասիրում ենք անվտանգության կանոնները: Քանի որ ճամփորդությունները բնության գրկում են, ապա հագուստը պետք է պաշտպանիչ դեր կատարի,ամեն տեսակ խայթոցներից, վնասվածքներից խուսափելու համար:

Հարմար,ջրակայուն, չհոգնեցող պետք է լինեն նաև ճամփորդի կոշիկները, որ երկար կարողանա քայլել: Նախապես սովորողների հետ քայլել ենք սովորում: Սկսում ենք փոքր տարածություններից, որ շուտ չհոգնեն և աստիճանաբար քայլերն ավելացնում ենք: Հաշվում ենք քայլերը, անցած ճանապարհի երկարությունը, չափումներ ենք անում, օրինակ՝ Արևելյան դպրոցի դեպի Մայր դպրոց քանի՞ քայլ է ուսուցչի քայլերով,քանի քայլ է սովորողի քայլերով, ո՞րն է ավել, որը՝ պակաս, ինչու՞ է այդպես: Անպայման սովորողներին ինքնուրույն մտածելու, եզրահանգումներ անելու հնարավորություն ենք տալիս,երբեք սկզբից չենք ասում ճիշտ պատասխանը:

Անվտանգ երթևեկության կանոններ ենք յուրացնում՝ ճանապարհի ո՞ր հատվածն է նախատեսված հետիոտնի համար, ինչպե՞ս և որտեղի՞ց ճանապարհ անցնել: Ճանաչողական տարբեր մուլտֆիլմեր, տեսաֆիլմեր ենք դիտում: Ես հիմնականում աշխատում եմ ուսումնական ֆիլմերը օտար լեզուներով մատուցել սովորողներին: Փոքր կտորներով, դադար տալով դիտում ենք օտարալեզու տեսանյութը, պարզում ենք ի՞նչ հասկացանք տեսածից, լսածից, նոր բառերը թարգմանում ենք, քննարկում ենք նյութը: Ընդհանրապես որքան շատ զգայարան է մասնակցում ուսումնական պրոցեսում, այնքան ավելի արդյունավետ է դառնում ընկալումը:

Հետո մարմնամարզության, լողի պարապմունքների մեկնելիս կամ կրթահամալիրի դպրոցից դպրոց քայլելիս կիրառում ենք մեր յուրացրածը:

Անպայման օգտվում ենք անցումներից, աստիճան բարձարանալ իջնելը, որոշակի տարածություն անցնելը սովորողների մոտ ձևավորում է այն տարրական հմտությունները, որոնք պետք են գալու բարձունքներ հաղթահարելիս:

Աստիճանաբար մեծացնում ենք քայլքի ճանապարհը: Նախնական որևէ մատչելի, պարզ ճամփորդության ենք մեկնում, որպեսզի հասկանանք, թե արդյոք հասել ենք մեր առջև դրված խնդիրների լուծմանը:

Սովորում ենք ճամփորդության ընթացքում մի շարքով,իրար օգնելով քայլել,ընկերոջ մասին հոգ տանել, ավելի թույլերին օգնել,պաշտպանել:

Ճամփորդությունն ունենում է առաջնորդ, ումից առաջ չի կարելի անցնել, վերջից գնացողից հետ մնալ չի կարելի:

Ճամփորդություններին միշտ սիրով միանում են ծնողները, ովքեր օգանականի դերում են հանդես գալիս: Շատ ծնողներ իրենց մասնագիտական հմտություններով են օգտակար լինում, օրինակ բժիշկ մայրիկը կամ հայրիկը կարող է ճամփորդության ընթացքում կամ ճամփորդությունից առաջ առաջին բուժօգնության պարապմունք անցկացնել: Սովորողները առաջին բուժօգության տարրական հմտությունների են սկսում տիապետել: Սովորում են, որ ճամփորդի պայուսակում անպայման բժշկական արկղիկ պետք է լինի: Ի՞նչ դեղորայք է պետք գալիս ճամփորդության ընթացքում:

Ուսումնական ֆիլմ՝ Առաջին բուժօգնության պարապմունք ճամփորդության ընթացքում

Սովորողները նաև արևից պաշտպանվել են սովորում: Միշտ ճամփորդում են գլխարկով,արևապաշտպան միջոցներով: Սովորում են հիգիենայի կանոնները պահպանել,ջրի բացակայության կամ սակավության պայմաններում ձեռքերը ճիշտ ախտահանել:

Ճամփորդական պայուսակը դասավորելուց առաջ սննդաբան ծնողի հետ պարապմունքի ժամանակ սովորում ենք ի՞նչ վերցնել ճամփորդության գնալիս, որ սնունդն է չփչացող, ինչպես մթերքը երկար պահպանել, սովորում են թե որքան ջուր պետք է վերցնեն: Որքան պետք է կշռի պայուսակը, որ հարմար լինի քայլել: Սովորում են կշռել, պայուսկի իրերը ճիշտ տեսակավորել:

Ճամփորդի պայուսակում միշտ աղբի տոպրակ և ձեռնոցներ կան: Ցանկացած ճամփորդության ժամանակն շրջակա միջավայրի մաքրման աշխատանքներ են տարվում: Սովորողները ոչ միայն սովորում են աղբը տեսակավորել, չթափել, շրջակա միջավայրը չաղտոտել, այլ սեփական երկիրը, բնությունը մաքրող, խնամող,պահպանողներ են դառնում: Եվ որքան վաղ տարիքից են ամենօրյա, ամեն ճամփորդության, ամեն ճամբարի ընթացքում իրականացվում նմանատիպ էկոնախագծերը, այդքան ավելի քչանում են բնությունը աղտոտողները:

Շատ կարևոր է նաև ճիշտ ընտրել ճամփորդական պայուսակը: Վերջինս պետք է հարմար լինի, որ ճամփորդը շուտ չհոգնի, չդժվարանա քայլել, ծանր չլինի:

Սովորողների հետ սովորում ենք պայուսակը կշռել: Հետո համեմատում ենք, թե ու՞մ պայուսակն է ծանր, ու՞մը՝ թեթև, որքանո՞վ, քանի առարկա կա, ի՞նչ գույն,ձև, համ ունեն առարկաները: Այդպես ճամփորդությունը վերածվում է իրական խաղ ուսուցման և իրական Իմացումի հրճվանք է դառնում երեխայի համար:

Ճամփորդական տեսաֆիլմեր

Սովորում ենք բարձունք հաղթահարել

Ճամփորդ էմիլին

Ճամփորդական պատումներ

Ճամփորդության նախագծումն ու պլանավորումը

Նախքան ուսումնական ճամփորդության մեկները, ուսուցիչն անպայման ինքն է ճամփորդում նախատեսվելիք ճամփորդության վայր, տեղում ուսումնասիրում է տարածքը, հասկանում է արդյոք իր դասարանին, խմբին համապատասխան է, կկարողանան բարձունքը հաղթահարել, կդժվարանա՞ն, թե՝ ոչ: Հետո ուսումնական նախագիծ է կազմվում, որը անպայման հստակ նպատակ ունի և տվյալ տարիքային խմբին ուղղված մանկավարժական խնդիրներ է լուծում:

Սովորողների հետ, ըստ ճամփորդական նախագծի, սկսվում է աշխատանքը ճամփորդությունից մեկ-երկու շաբաթ շուտ: Անհատական կամ փոքր խմբերով ուսումնասիրում են տարածքը, քարտեզի վրա նայում են աշխարհագրական դիրքը՝ ո՞ր մարզում է, ո՞ր քաղաքի մոտ է գտնվում,անվան ծագումնաբանությունը, ի՞նչ պատմամշակութային հուշարձաններ կան,ի՞նչ բնական հուշարձաններ կան տարծքում, ի՞նչ գետ է տարածքով հոսում:

Ուսումնասիրությունը մշակում են, մուտքագրում, ձայնագրում, պրեզենտացիաներ ստեղծում տարծքի մասին: Սովորում են Գուգլ քարտեզի օգնությամբ քարտեզ գծել, պարզել, թե քանի՞ կիլոմետր է հեռու դպրոցից, քանի՞ ժամում, որպեռում կհասնեն: Տարբեր խնդիրներ են կազմում, լուծում:

Նայում են եղանակի տեսությունը պարզելու համար, թե ինչ եղանակ է սպասվում ճամփորդության նախատեսված օրը:

Մի շարք պարապմունքներ են ունենում դպրոցի առողջագետի, բժշկ ծնողի հետ, ով առաջին բուժօգնության, անվտանգության կանոններ է սովորեցնում: Չվնասվելու լավագույն միջոցն իրազեկ լինելն է, ամենափոքր տարիքից պետք է մի շարք կարողունակությանուններ ձևավորել սովորողների մոտ, որոնց միջացով կկարողանան տարածքում կողմնորոշվել՝ հասկանալ հյուսիսն ու հարավը, արևելքն

ու արևմուտքը: Երեխաներին պետք է կոփել: Սովորեցնել, որ եթե նպատակ ես դրել ինչքան էլ դժվար լինի պետք է փորձես հաղթահարել, ուժեղանալ, ճանապարհից հետ չդառնալ:

Ուսումնական ճամփորդություններին միշտ ծնողական խումբ է մասնակցում: Կարևոր է ծնողավարության ճիշտ քաղաքականություն վարել, որ ծնողը օգնող, սովորեցնող, գործընկեր դառնա: Իմացածով կիսվի, չիմացածը սովորի, տանի իր ընտանիք:

Շատ կարևոր է, որ դասվարն ինքը ճամփորդ լինի, սիրի ճամփորդել, նոր հմտություններ յուրացնի և փոխանցի իր սովորողներին:

Ճամփորդությունները իրար ճանաչելու, օգնելու, իրար ավելի շատ սիրելու հրաշալի միջոցներ են: Դասարանն անիվների վրա նույն ուսումնական գործունեությամբ է զբաղվում, պարզապես ավելի կենդանի միջավայրում, կյանքի հմտություններ են փոխանցվում: Քայլելիս կարելի է ճանապարհի երկարություն չափել, համեմատել, ծառ ու թուփ ճանաչել, բնության երևույթներին ծանոթանալ,մի շարք հմտություններ ձեռք բերել, իրարից սովորել:

Ճամփորդական նախագծերը կարող են ամենատարբեր թեմաներով լինել՝ քաղաքի փողոցներում թափառելու, հին ու նոր քաղաքը բացահայտելու, քաղաքացիների հետ զրուցելու վերաբերյալ:

Շատ հաճախ, որպես ճամփորդության վայր կարող են հանդիսանալ տարբեր մասնագիտությունների տեր ծնողների արվեստանոց-արհեստանոցները, լաբորատորիաները, որտեղ ծնողը հանդես է գալիս որպես ուսուցանող և իր մասնագիատական հնտություններն է փոխանցում սովորողներին:

Օրինակ իմ դասարանի սովորողներից մեկի պապաիկը հայտնի քանդակագործ էր, ով սիրով իր թոռան ընկերներին հրավիրել էր իր արվեստանոց, որտեղ ցույց տվեց իր քանդակները, խաչքարերը, պատմեվ դրանց մասին,ցույց տվեց այն գործիքները, որոնցում ինքն աշխատում է, սովորողներին գործիք տվեց, որ իրենք էլ փորձեն քանդակել, սովորեցրեք գործիքը ճիշտ բռնել, քարի լեզուն հասկանալ:Սրանք հմտություններ են,որոնք շատ կարևոր են:Սովորողների մոտ սեր ու

հետաքրքրություն են արթնացնում դեպի տվյալ արհեստը կամ արվեստը: Հետագայում մասնագիտական կողմնորոշմանն են նպաստում:

Տարբեր ուսումնական նախագծերով լինում ենք երևանյան թանգարաններում,քաղաքային պուրակներում, ուսումնական լաբորատորիաներում:

Ամենուր որտեղ կարելի է սովորել վերածում ենք մեզ համար ուսումնական միջավայրի:

Օրինակ մի նախագծով ուսումնասիրում էինք Երևան քաղաքի հայտնի արձանները,հայտնի փողոցները: Մեկ այլ նախագծով ճամփորդեցինք Երևանի Մետրոպոլիտենում, սովորեցինք շարժասանդուղքից անվտանգ օգտվել, հաշվեցինք, թե քանի կայարան ունի մետրոն: Ստորգետնյա տրանսպորտից օգտվելու տարրական կանոններ յուրացրեցինք:

Մեկ այլ նախագծով եղանք Կոնդում, քայլեցինք հին Երևանի փողոցներում,շփվեցինք կոնդեցիների հետ, նրանցից հարցազրույցներ վերցրեցինք,տատիկ-պապիկները պատմեցին հին Երևանի, իրենց մանկության, այն խաղերի մասին, որոնք իրենք խաղում էին:

Կոմիտասի թանգարան-ինստիտուտում Սարյան-Կոմիտաս վարպետության պարապմունքի մասնակցեցինք, որի շնորհիվ ծանոթացանք Սարյանի գույներին, փորձեցինք կոմիտասյան հնչյունների ներքո Սարյանի գույներով նկարել:

Հետաքրքիր, բազմաթիվ ու բազմաբնույթ են ուսումնական ճամփորդությունները:

Վերջիններս օգնում են, որ ուսուցումն իրական իմացումի հրճվանք և անվերջ հետազոտելու, բացահայտելու աշխարհ դառնա սովորողի համար:

Սովորողներն այդ դեպքում ավելի մոտիվացված են սովորում, սիրով են ներգրավվում ուսումնական պրոցեսում:

Քանի որ նախագծերը կենդանի են, հիմնված են սեփական կենսափորձի վրա, դրանք մատչելի են դառնում տարբեր տեսակի երեխաների համար,ապահովվում են ներառականության միջավայր:

Նման միջավայրում միանգամից մի քանի զգայարան է աշխատում, որի շնորհիվ ավելի մատչելի ու արդյունավետ է դառնում ընկալման գործընթացքը:

Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում նմանատիպ մեթոդների կիրառումն առավել արդյունավետ է, բավարարում է կրտսեր դպրոցականի հետաքրքությունը:

Սովորողներին նախագծերի շնորհիվ սովորեցնում ենք տարբեր երևույթների, պատմաշակութային վայրերի մասին ինչպես տեղեկատվություն հավաքել, ինչպես ճամփորդական քարտեզ գծել:

Սովորողները իրենցից կրտսերների համար ուսումնական տեսանյութեր, ֆիլմեր, ռադիոն յութեր են պատրաստում, որտեղ և իրենց հետազոտական աշխատանքներն են, և տեսածի, լսածի մասին պատումներ:

Կրթական փոխանակման ծրագրերը ճամփորդությունների, ուսումնական ճամբարների միջոցով

Հեղինակային կրթական ծրագրերի տարածումը, այլ դպրոցների դասավանդողների, սովորողների հետ համագործակցային ծրագրերն ավելի հետաքրքիր և արդյունավետ են դառնում, երբ համատեղ ճամփորդական ծրագրեր են իրականացվում: Այդպիսի փորձ ունեմ Աշտարակի Վ.Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի մի քանի դասվարների հետ: Աշտարակի դպրոցի հետ փոխայցելությունները հանգեցրել են նրան, որ երկար ժամանակ է տարբեր ծեսեր միասին ենք նշում և նշում ենք ճամփորդությամբ:

Նախապես ուղարկվում է նախագիծը, ուսուցիչների հետ քննարկում ենք ծեսի մանրամասները, ուղարկում ենք երգացանկը, որ պետք է յուրացրած լինեն, քննարկվում է երթուղին ու միասին երգով, պարով, իրար օգնելով սկսում ենք ճամփորդել ու տեղում ծեսն իրականացնել:

Այդպես օրինակ Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի առաջին դասարանցիների, ծնողների հետ կրթահամալիրի մի քանի դասարանով Ծաղկեվանքում նշեցինք Համբարձման ծեսը:

Այլընտրանքային մանկավարժության զարգացման, տարածման,իրար հետ և իրարից սովորելու լավագույն միջոցներ են համագործակցային նախագծերը, որոնց միջոցով տարբերի տարիքի, սեռի, դասարանի, դպրոցի սովորողներ, մանկավարժներ աշխատատում են համընդհանուր նպտակի հասնելու համար: Յուրաքանչյուրը ներդնում է իր փորձն ու հմտությունները՝ իրար օգնելով խմբի յուրաքանչյուր անդամ հանդես է գալիս և՛ որպես սովորող, և՛ սովորեցնող:

Հենց տարեսկզբից ըստ ուսումնական օրացույցի կազմվել են տարբեր ուսումնական նախագծեր:

Ուս.տարում առավել շատ համագործակցել ենք Արևելյան դպրոցի 3-4 դասարանի սովորողների հետ: Քանի որ ֆիզիկապես նույն հարթակում էին գտնվում երկու դասարաններն էլ, տարիքային նույն խմբի սովորողներ էին ներառված խմբերում, ուսումնական ծրագիրը, նախագծերը նույնն էին, համատեղ աշխատանքն ավելի դյուրին և կազմակերված է ստացվում:Դասվարներով նախապես մշակել ենք նախագիծերի ուղղությունները, քայլերը, իրար լրացրելով ու օգնելով իրականացրել ենք:

Այդ նախագծերի շարքին են պատկանում՝

Անկախության տոնը բարձունքին: Դեպի Թեղենյաց վանք ուսումնական նախագիծը

- Բարձունքի հաղթահարում. նախագծային աշխատանք
- Բարձունքի հաղթահարում նախագծի ամփոփում

«Տիեզերք» ուսումնական նախագիծ

- Այցելություն Բյուրականի աստղադիտարան
- Նախագծի արդյունքները

Զատկական ծեսն Արմավիրի մարզում

- Կրկնազատիկն Ամասիայուն նախագծի ամփոփում

Քայլարշավ դեպի Կարմիր կամուրջ

- Կարմիր կամուրջ նախագծի ամփոփում

«Համբարձման ծեսն Ծաղկեվանքում»ուսումնական նախագիծ

- «Համբարձման ծեսն Ծաղկեվանքում»նախագծի ամփոփում

Քայլքն ու բանավոր մաթեմատիկան՝ Արևելքից մինչ Հարավ

- Համեղ մաթեմատիկա

Չնայած խմբի անդամների մեծաթվությանը՝ մոտ 50 սովորող, բոլոր ուսումնական նախագծերն իրականացվել են փոխօգնության, սիրո, համերաշխության մթնոլորտում: Հատկապես 3-րդ դասարանում շատ կարևոր են նման աշխատանքները, քանի որ 4-րդ դասարանից սկսած տվյալ տարիքային խումբն ունենալու է մեկ ընդհանուր կազմակերպիչ և անկախ այն փաստից, որ

սովորողները տարբեր դասարաններում են ներառված, իրար արդեն լավ ճանաչում են, համագործակցում են իրար հետ, օգնում են իրար՝ հանդես գալով որպես մեկ ընդհանուր խումբ:

Ուսումնական ճամբարների նախագծումը

Տարիքային ամեն խմբերում ուսումնական ճամբարները կազմակերպման նպատակները տարբեր կարող են լինել՝ կախված սովորողների տարիքային առնձնահատկություններից, նախագծով նախատեսված խնդիրներից, ճամբարի տարածքից: Այդ իսկ պատճառով ճամբարի նախապատրաստակ փուլում ճամբարի ղեկավարը նախապես ինքն է մեկնում, մի քանի օր ապրում ճամբարում, որպեսզի հստակ պատկերացնի, թե արդյոք նախատեսվելիք ճամբարային տարածքը հարմար է այն սովորողների խմբին, որոնց հետ նախատեսում է ճամբարային գործունեություն իրականացնել:

Ուսումնական ճամբարները շատ կարևոր են սոցալական հարաբերությունների զարգացման համար: Սովորողին հնարավորություն են տալիս այլ միջավայրում, ընկերների հետ համատեղ կենցաղ վարելու, ինքնադրսևորվելու, առավել ինքնուրույն դառնալուն: Ճամբարներին հատուկ է ռեժիմն ու կարգապահությունը: Յուրաքանչյուր ճամբարական պատասխանատվության իր բաժինն ունի ճամբարի կայացման հարցում: Ճամբարականը պատասխանատու է և իր, և ընկերոջ անվտանգության համար:

Նախապես ճամբարականները բաժանվում են խմբերի: Ամեն խումբը ճամբարային գործունեության մի ոլորտի համար է պատասխանատու՝ մի խումբը սննդի կազմակերպման, մյուսը՝ միջավայրի խնամքի և մաքրման, մյուսը՝ հետաքրքիր ժամանցի համար: Սննդի համար պատասխանատու սովորողները նախապես ճամբարի մասնակիցներից ճշտում են այն ուտեսները, որ գրթե բոլորն են սիրում: Կազմում եմ ճամբարային համեղ և բազմազան ճաշացանկ: Գնումների համար ցուցակ են գրում,կատարում են նախնական հաշվարկ: Միասին գնում են կատարում, օգնում են տեղավորել սնունդը:

Յուրաքանչյուր ճամբարական ամեն օր մաքրում է և մաքուր է պահում իր շրջակա միջավայրը, քանի որ հիմնականում բնության գրկում են լինում ճամբարները, խստագույնս հետևում է իր և ընկերների անվտանգությանը:

Մի խումբը խարույկի համար փայտ է հավաքում, մյուսները մաքրում են վրանները կամ սենյակները, լիցքավորում եմ լույս տվեղ մարտկոցները, որ երեկոյան լույս ունենան, եթե խմելու ջրի խնդիր կա, գնում են ջուր բերելու, սնունդ են պատրաստում մի խմբով, լվանում են սպասքն ու տարաբնույթ աշխատանքներ կատարում: Սրանք կենցաղավարության հմտություններ են, որոնք շատ կարևոր են երեխայի համար: Միասին նույն հարկի տակ առանց մեծահասակների մի քանի օր ապրելը, իրար մասին հոգ տանելը բարձրացնում է պատասխանատվության զգացումը, սովորողներն ավելի կազմակերպված եմ դառնում:

Ուսումնական ճամբարների նախագծումն ու կազմակերպումը

Կրտսեր դպրոցի սովորողների հետ հաճախ ենք կազմակերպում ուսումնական ճամբարներ: Օրինակ հուլիս ամսին Արևելյան դպրոցի մի խումբ երրորդ դասարանցիներ ընտանեկան դպրոցներով «Ելք» ճամփորդությամբ: Դեպի Արատես նախագծով մեկնել էին եռօրյա ճամբարի:Սեբաստացիներին բնորոշ համերաշխությամբ Երևան – Արտաշատ – Երասխ — Սևակավան – Զանգակատուն – Գետափ — Եղեգիսի կիրճ – Շատին – Եղեգիս – Հերմոն — Արատես երթուղով , մեծ ու փոքրով ճանապարհ ընկանք: Հաղթահարեցինք Սմբատաբերդի բարձունքը:Չնայած դժվարություններին, շոգին, հետո անձրևին, անգամ 2 տարեկան Սեբաստացիները կարողացան բարձունքը հաղթահարել:

Երեկոյան հասանք Արատես, ընթրեցինք, սենյակները կարգի բերեցինք և հավաքվեցինք խարույկի շուրջ: Արատեսում հատկապես գեղեցիկ են գիշերները: Անթիվ անհամար աստղերը կարծես շաղ են տված երկնքով մեկ, շուրջդ լեռնե՛ր են, լեռնե՛ր:

Առավոտյան մարզվելուց, ներս ու դուրսը փոքրի Իշխանի նման մաքրելուց հետո, նախաճաշեցինք, հագանք լողազգստներն ու շարժվեցինք Արատես գետի սառնորակ ջրերում լողալու: Ճանապարհին հիացանք Արատեսի վանքի գեղեցկությամբ, հոգևոր երգով ողջունեցինք վանքին և իջանք ձորը լողալու:

Խաղացինք, երգեցինք, պարեցինք Արատեսում, իրար ավելի լավ բացահայտեցինք ու ավելի շատ սկսեցինք սիրել: Մի տեսակ ավելի հարազատ են դարձնում մարդկանց ճամփորդությունները՝ իրար հետ հաց եք կիսում, դժվարություններ հաղթահարում, իրար օգնում, հոգ տանում, դրանից էլ ավելի մեծ ստուգատե՞ս…

Ուսումնական ֆիլմ՝

Դեպի Սմբատաբերդ

Եկած ճամփով ետ չդարձանք: Վերադարձին մտանք Օրբելյանների քարավանատուն, Վարդենյաց լեռնանցքով, Ներքին Գետաշենով հասանք Սևան, որտեղ նոր ափ բացահայտեցինք՝ սպիտակ-սպիտակ ավազից, մի լավ լողացինք, ճմերուկ կերանք և վերադարձանք Երևան:

Սովորողների պատումները.

Պատմում է Եվա Ղավալյանը

Պատմում է էվա Մխիթարյանը.

Պատմում է Բաղդասարյան Յանան

Ղազարյան Մարի

Վերջաբան

Այսպիսով՝ Հեղինակային կրթական ծրագրերն անհնար է պատկերացնել առանց ուսումնական ճամփորդությունների և ճամբարների: Ուսուցումն անընդհատ, ամենուր, կյանքով և կյանքի համար կարողունակությունների, հմտությունների, գիտելիքների փոխանցման գործընթաց է, որն արդունավետ է դառնում երբ իրականացվում է կենդանի միջավայրում:

Իրար հետ ապրելով, խաղալով, իրարից սովորելով ու իրար սովորեցնելով տարատարիք Սեբաստացիներն անվերջ ճամփորդում ու ճամփորդում են:

Դասարան է ամեն թուփ ու քար, եթե կա սովորող ու սովորեցնող, հետաքրքություն և հետաքրքրություն առաջացնող, ապա հենց ամենահիսկական, կենդանի միջավայրնում ես, որն ամենաբարենպաստն է ուսուցման համար:

Գրականության ցանկ

Հետազոտական աշխատանքը շարադրելիս որևէ աղբյուրից չեմ օգտվել, նկարագրել եմ իմ մանկավարժական գործունեության ընթացքում ճամփորդական և ճամբարների կազմակերպման փորձը: